ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՎԹԱՇԵՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

«28» 10 2021թ.
№ 23/01-26462

ք.Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ. վարչական շենք
հեռ. /011/51-82-82, davtashen@yerevan. am

«ԲԱՋՄԱԲԵՐԴ 89» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
Ք. Երևան, Անդրանիկի փ. 118, բն.7

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

Երևանի քաղաքապետարանի և Ձեր ընկերության միջև 2021 թվականի հուլիսի 30-ին կնքվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/162-1» ծածկագրով գնման պայմանագիրը:

Սույն գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

2021 թվականի հոկտեմբերի 25-ին Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի աշխատակազմ մուտքագրված Ձեր գրությամբ «ԲԱՋՄԱԲԵՐԴ 89» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունից տեղեկացրել եք,որ ընկերությունը չնախատեսված խոչընդոտների պատճառով չի կարող մատակարարել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/162-1» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ապրանքները և խնդրել եք լուծել պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հիմք ընդունելով Ձեր դիմումը վերոնշյալ պայմանագիրը լուծելու վերաբերյալ և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքով, Երևանի քաղաքապետարանի և «ԲԱԶՄԱԲԵՐԴ 89» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2021 թվականի հուլիսի 30-ին կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/162-1» ծածկագրով գնման պայմանագիրը համարվում է լուծված:

Ծանուցումը ներկայացվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջներն իրականացնելու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Մ.ԹՈՒՄԱՍՅԱՆ

Իրավաբանական բաժին

Կատ.Մ.Խաչիկյան, հեռ.011518283